ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 38 - Ա
06 մարտի 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N 182 – Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԳԵՂՀՈՎԻՏԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ, 68-րդ հոդվածի 7-րդ և 67-րդ հոդվածի առաջին մասերի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 41- Ա որոշման պահանջները

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2007 թվականի հունիսի 8-ի «ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գեղհովիտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն հիմնադրման մասին» N182-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գեղհովիտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2 կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

4.2 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 120000 (մեկ հարյուր քսան հազար) դրամ, որը կազմում է 12 (տասն երկու) հատ 10000 (տասն հազար) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

Ընկերության թողարկած բոլոր 12 (տասն երկու) հատ բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են, ոչ փաստաթղթային:

2. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գեղհովիտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գեղհովիտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա. Սարգսյանին՝ սեղմ ժամկետում ապահովել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գեղհովիտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված

Կազմված է .....2015թ.
բաղկացած է 2 (երկու) թերթից
Ցպագրված է ընդամենը 5 օրինակ
ՕՐԻՆԱԿ____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2015 թ. Մարտի ի 6 ի
N 38-Ա որոշմամբ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետ

_____ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական
գրանցման գործակալության _____
տարածքային բաժնի կողմից ___ _____

գրանցման թիվ _____
վկայական ____ _____
ՀՎՎՀ _____
թիվ N_____ փոփոխությունը
գրանցված _____
թիվ N_____ փոփոխությունը
գրանցված _____
Պետական ռեգիստրի _____
տարածքային բաժնի կողմից

_____ _____

«ԳԵՂՀՈՎԻՏԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(փոփոխություն)

4.2 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 120000 (մեկ հարյուր քսան հազար) դրամ, որը կազմում է 12 (տասն երկու) հատ 10000 (տասն հազար) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

Ընկերության թողարկած բոլոր 12 (տասն երկու) հատ բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են, ոչ փաստաթղթային:

Սույն փոփոխությունը հանդիսանում է « Գեղհովիտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության (գրանցված 15.06.2007թ., գրանցման թիվ 222.120.00754, փոփոխություն թիվ 02-3, գրանցված 05.12.2011թ.թիվ _____ փոփոխությունը գրանցված _____) բաղկացուցիչ մասը: